ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ 50 ԵՎ ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՖՏՈԿԵՖԱԼՈՒԹՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Աստուծո ողորմությամբ, ուրախությամբ գալիս ենք սուրբ գրական Արարատի երկրից, քրիստոնյա Հայաստանից՝ մասնակցելու համար ռումեն օրթոդոքս եկեղեցու մեծ հանդիսություններին, նվիրված նրա ինքնագլուխ եկեղեցի դառնալու իննսունամյա և նրա Պատրիարքական Աթոռի հիմնադրության հիսնամյա հոբելյաններին:

Քրիստոսի Ավետարանի փրկարար լույսը մեր թվարկության առաջին իսկ դարերից թափանցեց մինչև Դանուբի ափերը և Կարպատյան լեռնաշղթան, ուր ոչ շատ ժամանակ անց սկսվեց ռումեն ժողովրդի կազմավորումը:

Կխորհինք, թե չենք սխալվում, հաստատելով, թե քրիստոնեական հավատքի տարածումն ու բյուրեղացումը դանուբյան երկրներում մեծ չափով համապատասխանում է ռումեն ժողովրդի կազմավորման պատմական զարգացմանը:

Հայ պատմիչներ և աշխարհագետներ 7-րդ և 13-րդ դարերում իրենց գործերի մեջ հիշատակում են Վալախների երկրի մասին Դանուբի ափերին:

Նույն հայ պատմիչը՝ 13-րդ դարի Վարդան Արևելցի վարդապետը, իր մեկ ուրիշ գործում՝ «Պատմութիւն Տիեզերական», վկայություն է բերում, որ խաչակրաց երրորդ արշավանքի ժամանակ, 1189 թվին, քրիստոնյա բանակների մեջ, որոնք հասան մինչև դաշնակից Կիլիկյան Հայաստանը, գտնվում էին «բազմութիւն Վալախ զօրաց», որոնք կռվեցին քրիստոնյա բանակների կողքին:

Եթե ռումեն օրթոդոքս եկեղեցու կազմակերպումը իբրև ինքնագլուխ եկեղեցի և նրա պատրիարքական աստիճանի բարձրացումը տեղի ունեցան միայն հիսուն և հիսուն տարիներ մեզանից առաջ, հետևանք են մեծ չափով պատմության ծանր վերիվայրումներին և ողբերգական ճակատագրին, որ ապրեց այս ժողովուրդը օտար տիրապետությունների և մանավանդ օսմանյան լծի ճնշման ներքո, որը մոտ երեք դարեր շարունակ փակեց ճանապարհը ռումեն երկրների զարգացման:

Պատահական չէ, որ Ռումանիո անկախության հռչակումից քիչ ժամանակ անց, ռումեն ժողովրդի Մայր եկեղեցին ձեռք բերեց իր ինքնագլխությունը և մեծ Ռումանիո ստեղծումից գրեթե անմիջապես հետո հաստատվեց նրա Պատրիարքական ազգային Աթոռը:

Բոլոր այս պատմական զարգացումները արտահայտում են հստակ կերպով այն սերտ և օրգանական կապը ու միատեղ զարգանալու ընթացքը ռումեն ժողովրդի ազատ ու անկախ պետության և նույն ժողովրդի Մայր եկեղեցու կազմակերպման և ծաղկման միջև:

Ինչքան նշանակալից է, որ այսօր ընկերվարական Ռումանիո դարաշրջանում, մի դարաշրջան հսկայական հառաջդիմությանց՝ ընկերային, մշակութային և տնտեսական բոլոր բնագավառներում, ռումեն օրթոդոքս եկեղեցին, մեր օրերի արևելյան օրթոդոքսության հզոր մեկ այունը, տոնախնջմբում է իր բազմադարյան պատմության երկու մեծ իրադարձությունները՝ փայլուն կերպով դրսևորելով այս կերպ ոչ միայն իր ոգեկան կենսունակությունը, այլ նաև իր պատմական առաքելության գիտակցությունը՝ լինելու և մնալու միշտ անքաժան իր ժողովրդի ազգային ճակատագրից և տեսիլքներից:

Մեզ բոլորիս համար հոգեկան մեծ մխիթարություն և քաջալերանք է հաստատելու՝ միատեղ զարգանալու և միասին գործակցելու այս երջանիկ գոյավիճակը պետության և եկեղեցու միջև, ազգային ինքնիշխանության և ընկերվարական կյանքի կառուցման պայմաններում:

Եվ անարդար պիտի լիներ, կարծում ենք, եթե այսօր այստեղ չբերեինք Մեր վկայությունը, Մեր հարգանքն ու Մեր բարձր գնահատանքը Ռումանիո երրորդ Պատրիարքին, Նորին Սրբություն Ժուստինիան Հայրապետին, որը իմաստուն կերպով և հերոսաբար ավելի քան քառորդ դարե ի վեր հանդիսացավ խորհրդանիշը ռումեն եկեղեցու ոգեկանության և կենդանի ջանը նրա հայրենասիրական գիտակցության:

Թող բարին Աստված հավետ պահապան մնա ռումեն հավատացյալ ժողովրդին և հավետ անսասան ու ծաղկյալ պահի նրա նախահայրերի սուրբ եկեղեցին:

Գերերջանիկ Պատրիարք Եղբայր, Դուք պահպանեցիք հավատքը, մղեցիք բարվոք պատերազմը և հասաք հաղթանակի բարձունքներին, բայց ոչ դեռևս Ձեր ճանապարհի վախճանին:

Ձերդ Սրբության ի խորոց սրտե մաղթում ենք լիակատար քաջառողջություն և տակավին շատ ու շատ հովվապետության տարիներ խաղաղու-

թյան ու բարգավաճության մեջ նորանոր և լուսավոր իրագործումներով՝ ի շինություն եկեղեցու և մայր հայրենիքի:

Եվ արդ, սիրեցյալ եղբայրներ Մեր ի Քրիստոս, գոհություն մատուցանենք Աստուծո ամենակալին, որ արժանի արեց մեզ միասին փառավորելու մեր քույր եկեղեցու մեծ հոբելյանները և մեր ձայնը բարձրացնենք երգելով՝ «Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա» (Սաղմոս ՃԺԸ 24):

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
2 նոյեմբեր 1975 թ.